

ՎԱՐՄԱՆՈՒՄ ԲԱՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիտյ համար
 5 տրեկա՝ 12 թր.
 Վճարմանը 6 " "
 Ա. Կարմիրակի
 համար 5 տրեկան 15
 Վճարմանը 8 " "
 Ստեփանյի համար
 3 սյր.
 Վճարմանը 1.50 " "
 ԿԱՐՄԱՆԻ ՎՃԱՐՄԱՆ

Սահմանափակ տպող ստան-
 ձիկ երեսին համար 40 ս-
 յակ վերջին երեսին հա-
 մար 20 սանթիմետր է. երեսին
 սակի սանթիմետր համար
 20 սյր զեղը կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՊԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

(20 ԱՄԵՐԻԿԱ)

Պոչկարիտյ համար ձեռքի
 15 ԱՄԵՐԻԿԱ

ՇԱՐՔՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԵՐ ՊԵՏԲ Է ԿԱՆԵՆԻՎ ՎՃԱՐԷ

ՁՐԻԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՅԵՂ ԱՓՈՒՍԱԿԱՆ ՄԱՐԺԻՆՆԵՐԻ ՄԷՉ

Անկարգապահության խնա-
 միական ձգտումներով և տրամա-
 դրույթներով մարմինները
 վարելու, անսանձապահության
 պակասության և պաշտոնասիրու-
 թեան պատճառով ձրիակերու-
 թիւնը բաւական մրցում է մեր
 յեղափոխական մարմիններին մէջ
 գոյութիւն ունեցող սակաւապե-
 սութեան և անսանձապահության
 հետ :

Մեր Յեղափոխական մարմին-
 ներին մէջ սկսած շնչն եղել մար-
 գիկ, որոնք յեղափոխական տիրու-
 ղուը կրելով, բայց առանց մի
 յեղափոխական գործ կատարե-
 լու, շարունակ ապրել են կաղ-
 մակերպութիւններին կամ հասու-
 րակութեան հաշուով :

Յեղափոխութեան անունով ու-
 սում առնողներ անգամ գտնվել
 են :

Շատ անգամ անձն զորճ գոր-
 ծիչը աւելի նիւթական նեղ կա-
 ցութեան մէջ է գտնվել, մանա-
 ւանդ բանտերում, քան թէ սի-
 րող յեղափոխականը :

Եւ շատ բնական է, որովհետեւ
 նախ անձնազօհը սերտ կապեր
 չէ ունեցել սիրող վարիչների
 հետ, երկրորդ՝ նրան մտնեալը
 աւելի վտանգաւոր է սիրող վա-
 րիչների համար, Իսկ սիրող յե-
 ղափոխական բանտարկեալը թէ
 վարիչներին է մտնիկ եղել, և
 թէ նրան մտնեալը աւելի ան
 վտանգ է Հայ ազատագրութեան
 հերոսը բանտում անօթի է մնա-
 ցել, Իսկ սիրողը մեծ քանակու-
 թեամբ գրամ է վատնել :

Եւ այս վերջերք, որոնք ներ-
 սից կրծում են յեղափոխական
 մարմիններին օրտերը՝ մի օր սը-
 րանց շառաչումով տուպակիւր
 համար, պէտք է կարողանան
 հիմնովին կործանել մեր յեղա-
 փոխական կազմակերպութիւննե-
 րը, եթէ նրանց վարիչները
 անցնալի փորձերից խրատված,
 Իսկոյն ամենակարգուկ միջոցները

ձեռք չառնեն այդ վերջերքը
 բուժելու :

Ս.Ս.Յ. մի ժողովրդի յեղափո-
 խական մարմիններ ունեցել են
 նոյնանման պակասութիւններ,
 ինչ որ մեր մարմինները ունին.
 Բայց ամեն մի ժողովրդի սնկեղծ
 և անձնագորճ յեղափոխականները
 այդ մեղքն ու վերջը պակասու-
 թիւնները նկատելուն պէս՝ Իսկոյն
 արմատական օպերատիւնի են
 գիմել վերջնական բուժման
 համար :

Հայ յեղափոխական կազմակեր-
 պութիւնները շատ կարեւոր գոր-
 ժեր են կատարելու յոյսով այդ օր-
 նալ չի կարող. բայց դեռ աւելի
 մեծ, աւելի վճռողական գործե-
 րը ապագայում պէտք է լինեն :

Մեր յեղափոխութեան նախ-
 նական շրջաններում, երբ
 գիտակցութիւն չը կար, երբ
 անձնագորճներ թիւր շատ ան-
 նշան էր, մասամբ յեղափոխու-
 թեան վարիչներին ներքին էր
 թողլ և ներողամտաբար վերա-
 բերվել զէպի անխուսափելի պա-
 կասութիւնները. բայց այսօր նե-
 րքին չէ և յ միայն ներքին չէ,
 այլ և խստիւ գոտապարտելի է
 ժամանակ է ընդունել, իր ամ-
 բող խստութեամբը, յեղափոխ
 կան դատան կօտեքսը. այդ կօ-
 տեքսով միայն կարելի է մեր
 յեղափոխական մարմինները ցան
 կալի բարձրութեան հասցնել, և
 զտուժը, փրկարար գտուժը կա-
 տարել :

ՎՍՐԳՕ

ՀԻՆ ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐԸ

Կը լսենք որ Հին Հնչակեան
 ներք միացած կեդրոնի համար
 արգէն երեք հոգի ընտրած են
 եթէ իրօք այն անձերը ընտրուած
 են, որոնց անունները հաղորդ-
 ուեցաւ մեզի, կը շնորհաւորենք
 Հին Հնչակեանները, եթէ վերա-
 կազմեալներն ալ կարենան իրենց
 միւս ընկերներուն պէս յաջող
 ընտրութիւն ընել, այն ժամա-
 նակ շատ հաւանական է թէ Հն-

չակեանութիւնը պիտի բարձ-
 րանայ, եթէ այդ ընտրուածները
 պահած են իրենց նախկին և
 աւելի և հաւատարմութիւն հայա-
 զատագրութեան գործը, թուլցած
 չէ իրենց յեղափոխական նկա-
 րագիրը, այն ժամանակ Հնչակ-
 եան կուսակցութիւնը շատով պի-
 տի մաքրուի Արփիարի սրակած
 թոյներէն :

Կանոնաւոր, զուտ յեղափոխա-
 կան մարդերէ կազմուած կեդրոն
 մըն է որ կսպասուի Հնչակեան-
 ներէն, և երբ այդ իրակունցաւ,
 մեծ շնորհակալութիւն մը պիտի
 յայտնենք վերակազմեալներու
 ժամանակաւոր երիտասարդ կեդ-
 րոնին, որ գործի գլուխ անցնե-
 լուն պէս առաջին գործը եղաւ
 Արփիարի թողած գարշահոտու-
 թիւնները մաքրել, ու իրարմէ
 զազանարար զատուած եզբայր-
 ները միացնել :

Վերակազմեալներու մէջ ալ
 կան մաքուր և կեդրոնի համար
 արժանի յեղափոխական անձեր,
 մնչի համար բաղձալի է և ամ-
 բող Հնչակեանութեան համար
 օգտակար է որ այդ մարդիկը
 ընտրուին կեդրոնի անդամներ :

Ու թող Արփիարը տժաժայ,
 թող փախան թէ հարուստ մար-
 գիկ չի կան կազմակերպութեանց
 մէջ, առոնք ամենք քամիի նշա-
 նակութիւն չը պիտի ունենան
 յեղափոխ. մարմիններու առջեւ,
 որ կազմուած պիտի ըլլան յեղա-
 փոխութեան արիւնտ մաքառու-
 մի մէջ կուտած ու կոփուած ան-
 ձերէ :

ԿԵՏ

Հ. Յ. ԴԱՇԵԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՒՆ

ԺՂԵՎ

Յարգելի Հայրենակիցներ,

Ուրիշութեամբ կիսացնենք Ձեզ,
 որ Հին և վերակազմեալ Հնչակ-
 եան երկու հաստատներուն միջեւ
 միութեան բոլոր պայմաններուն վը-
 րայ վերջնական համաձայնութիւն
 գոյացած է :

Կարելի եղածին չափ շուտ, ամբողջ
 կուսակցութեան քուէով, պիտի ընտ-

րուի միացեալ ու միակ Հնչակեան
 կուսակցութեան կեդրոնական վար-
 չութիւնը, որ պաշտօնապէս պիտի
 հաղորդէ Ձեզ իր կազմութիւնը եւ
 որուն հետ է որ պիտի կրնաք այլ
 եւս ուղղակի բանակցութեան մտնել
 Միութեան մասին երբ ժամանակը
 հասած նկատէք :

Միրքի է մեզ յուսալ որ մինչեւ
 միացեալ ու միակ Հնչակեան կեդրո-
 նին կազմութիւնը, ի վիճակի կը-
 լաք ուղղակի բանակցութեանց ձեռ-
 նարկելու, որով կարելի կըլլայ վըճ-
 սական քայլն առնել զէպի հայ յե-
 ղափոխական ուժերու ամբողջական,
 բաղձալի միացումը :

Ընդունեցէք մեր յարգանքները
 Հնչակ. կուս. կեդր. վարչութեան
 կողմէն :

Ատենադպիր Ատենապետ
 (Ստորագրութիւն) (Ստորագրութիւն)
 Կնիք: Նոր կեանք

ՓԱՍՏԵՐ ԵՒ ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Նառնակ Բ.

Թաւրիզ, 16 Մարտ

Այժմ խօսելու ենք մի հին, շատ
 հին ցաւի մասին, որ որքան հին է,
 նայնքան եւ խորն, մեծ. դա կարմիր
 Սուլթանի հասցրած ցաւն է :

Մեծ մարդասպանը իր արիւնտ
 ճիւղները տարածում է եւ Պարս-
 կաստանի զանազան անկիւնները,
 այստեղ եւս տանջած Հայր ազատ
 չէ նրա հայրամանքից, այս սեղ էլ
 վրդովում, խանգարում են նրա հան-
 գիտը: Համիլէի հարազատ հետե-
 ւորդները, նրա բարբարոսութիւննե-
 րի երկրպագուները համարեայ ցան-
 ցի նման քանել են ամբողջ Պարս-
 կաստանը: Նրանք ինտրիգներ են
 ձեռք առնում, թակարդներ պատ-
 րաստում ամբողջ հայ ազգաբնակու-
 թիւնը կասկածելի եւ վտանգաւոր
 ներկայացնելու պարսիկ կառավարու-
 թեան առաջ, ձգտում են խոզվու-
 թիւններ առաջ բերել, խուզարկու-
 թիւններին առիթ տալ :

Պարսից կառավարութիւնը դարա-
 ւոր փորձերից շատ լաւ գիտէ, և,
 որ որ գլխաւորն է, հասել է այն եզ-
 րակացութեան, թէ Պարսկաստանում
 միայն հայն է այն տարրը, որը կա-
 րող է և ընդունակ է զարգացնել
 վաճառականութիւնը, նպաստել ար-
 գիւնարբութեան, տարածել լուսաւո-
 րութիւն և կրթութիւն եւ այլն :
 Դրա համար մենք ունենք շատ փաս-

բար պիտի լլար յիշեցնել երբեմն. սա համեմատ լայն յանկարծակիի բերող իրողութիւնն է՝ բոլոր այն Հայ- յերը, որոնք չեն ազդել միայն իրենց կոչին համար, այլ որոնք իրենց քննութեամբ և զգուշացմամբ հանրային իտէպի մը, անոնք որոնք չի պակաս իրենց ազդեցութիւնը քաղաքացիական պարտականութիւններուն տարրական գիտակցութիւնը, անոնք — հարազատները, լուսագոյնները — չեն սուսամ երբեք ու չլին ալ կրնար սպանլ սեր Կուսակցութեան անեղ- գանակ ու անայնկող փողարներու գաղտնային, Անոնք որոնք իսկ կը պատկանին մէջ կամ միւս ապրող ու գործ զ յեղափոխական կազմակերպու- թեան, իսկ այն երիտասարդ յեղա- փոխական խմբակները, որոնք մի- ութնական տիպարներու տակ՝ սոյն- քան խանդավառութեն կը շարժին այս միջոցին, անոնք՝ տարակոյտ չունինք՝ իրենց անկեղծութեան տիրակալ տա- պարցը պիտի մտն թան ալ վաղը, կարծօրն, մտորարար, միացած յե- ղափոխական կուսակցութիւններուն միանալով:

Ո՞վ կը մնայ դուրս... վարանտու- ներ, ետևող անտարբերներ, քարա- ցած չզգոցներ ու վերջապէս իրենք — նոր եղանակին անկարող, ծիծաղե- լի, դատապարտուած հազներգութիւնը, ՆՈՐ—ԿԵՍՆԻՔ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռոստոմ 4 ապրիլ 1902

Տար Խմբագիր!

Հարկադրուած ըլլալով վերջին ան- գամ մըն ալ պատասխանել պ. Նժդե- հին, կը խնդրեմ որ ներկայ գրու- թեան սիւնակ մը յատկացնէք Ձեր թերթին մէջ, որու մասին աւժմէն կը յայտնեմ շնորհակալութիւնս:

Թէ ինչու չէի ուզեր պատասխա- նել. «ՆՈՐ-ԿԵՍՆԻՔ» 402 թիւին մէջ, Պրն. Նժդեհ իւր կատարած բաժնի տու- ար հետապնդելու համար նորէն տու- աներու դիմել կը փորձէ: Կերեւի պա- րտն չէ բարեհաճեր գրութիւնէս խրատ ուլի:

Նախ պէտք է ըսել որ խնդրին չե- ղեր ճշմարտութենէ խոյս տու կը նշանակէ: Ես, որ իմ գրութիւնովս միտն գծուած նկարագրի մը պատկերը ցողացնող հայրին ներկայացուցեր էի յարգելի ընթերցողներուն, երբեք պէտք չունի իրմէն հասկնալու թէ 1901 տարուան Ընդհ. ժողովը ինչ պատճառներով որոշած էր սրճարանը վերցնել: Այս կէտը, որ իր մանրա- մասնութեամբ ինքնիմաստ է և որը պարզապէս երկու երեք անիմաստ նախադասութիւններ թիւնու համար յիշուած է, նախընթացը եղած է ա- ւելի քան ծիծաղելի երևանակամի մը. . . . Ենթադրենք որ այս անողերը ստորագրողը ուսուցիչ մըն է, որուն յանձնուած է ապագայ սերունդը պատրաստելու միտնով գործը. . . .

Պարտնը հոս կարեւոր անտեսում մը կընէ զպրոցական տղոց ուրիշ սրճա- րաններ չի յաճախելը ընթերցարա- նին վերագրելով. թո՞ղ անգամ մը չուկայ ելլէ համոզուելու համար որ անոնք որոնք սրճարաններ կը յաճա- խեն թէ ոչ. սակէ դատ, ան Ազգ- վարժարանի գոտարարակ ուսուցչին պարտաւորութիւնը կը սահմանէր իւր նախորդ գրութեան մէջ. կը հարցնեմ

իրեն, եթէ ինք ալ գտնուելու ըլլար այդ սրճարան յաճախող, կիմնա- ղիտներու մէջ, պիտի ճանցնէր ու և է արտաքին իրաւասութիւն. իրաւ է թէ Ազգ. վարժարանէն ալ աշակերտ մը գացած է այս սրճարանը, սակայն այն օրուինէ իսկ իրեն արգիւտած է հոն յաճախելը:

Ահա այս հոգաւորականութիւնը մէջ է որ սն քաջալիրած կըլլամ սպաք ի- րենց անպատու արիւ ճաճութեան մէջ: Որ անին ունի լուրջ, լուրջ:

Անդին երրորդ մըն ալ կայ. այդ ալ Տիկ. խնամակալութեան ընթեր- ցարան յաճախելու՝ յախտենական հակասութեան մէջ լինելու գատա- պարտուած խնդիրն է:

Եղբայր, ինչու չէք ուզեր հոս- կնալ թէ «Տիկիները» անցեալ տարի կարգալու համար ընթերցարան կեր- թայինս բնութեան 98 և 99 թուական- ներուն ընթերցարան գացած ըլլալ- նին չի նշանակեր, բաւարարութեան չէնենք:

Շատ երկար պիտի ըլլար բոլոր հա- կասութիւնները մի առ մի յիշելը և գուցէ «Շարժում» էջերն ալ չը նե- րէին ինծի աւելի երկար գրելու. ա սոր համար երկրորդ և վերջին ան- գամս ըլլալով կը յիշեցնեմ ձեզի որ եթէ ուրիշ անթիւ ու է ինչորի մա- սին գրել փափո գիւք, ջանացէք այդ խնդիրն աննաստոյգ աղբիւրէն քա- ղել ձեր տեղեկութիւնները, հակա ոսկ պարագային ձեր հանած աղմու- կը՝ կարկուտէ բո՞ւուած նախեմանի մը հանած աղմուկէն երբեք տարբե- րութիւն մը չը պիտի ունենայ:

Ահա թէ ինչու չէի ուզեր պատաս- խանել:

Ս. Յ. Մանուկեան

Ֆիլիպի 2 ապրիլ

Աւելորդ չեմ համարիր ճամբորդ... ընկերէս մօտերս «Աթլէք» ստացած մէկ նամակէն յաղած լուրերը յայտ- նել «ՆՈՐ-ԿԵՍՆԻՔ» ընթերցողներուն:

«Սիրելիս. — վերջինս երկար դժ- ուարութիւններէ... վերջ հասանք Աթլէք. հոս ալ (20) քսան հայէ բազմ սցած գաղութ մը կայ, որոնք չեն կրնար կոր իրարու հետ համե- րալի կերպով ապրիլ, Գրեթէ օ մենքն ալ իրարու հետ կուտած են:

Մեծ մեծ (2) երկու հատ ալ քահա- նայ կայ, Ես միայն մէկ հատին հետ տեսնուեցայ, յիշեալ քեզ ալ ծա- նօթ ըլլայ, Գրեթէ ինչ քահանայ Արժուրէի, հանած վարձին մէկը:

Տուն մը բռնած են (3) երեք սեն- եակով, մէկը քահանայ կը պատիւի. միւսը հիւրասենեակ, իսկ երրորդն ալ եկեղեցի բրած են: Փիլիպի մէջ կայ 3-4 հայ զայնքէններ, սրկիւս և աւազակներն. Փիլիպի նորը բոլոր հայ ճամբորդները կը կողպուուին աստնց- մէ. այսինքն քեզի պըլէթ պիտի առ- նենք, քեզի լու և աղբոր օթէլ պի տի տանինք և այլն վերջապէս: ասոր նման կարգ մը խաբարայական խօս- քեր... Ձեմ յիշեր քանի օր է անցեր, երեք հատ Կեսարիացի ճամբորդներ չորթեցին ամենամանկից կերպով (13) տասն երեք նարուցանի շափ գուճար մը. հապա՛ եթէ, մի սքառցէ, ազգատ հայ մը ինչայ հոս. արդեօք ինչ պի- տի ըլլայ վիճակը. ըսել է անօթու- թեանէն մեռելու է... Մե՛ղք, միւրք մեր հայութեան...:

Աթլէքի մէջ հայերէն ամենէն հա- րուստը և հոգաբարձուն Լեւոն Պե-

տիկեան անձն է. Եղբայր, պէտք է այս հայ յարգիւններուն մէջ յայտա- բարել, թող այդ անձը չի ֆնտնայ ձեռքը բերանը հասնող մարդ մն է, քանի որ կարողութիւն ունի, ինչու հոգ չը տանի. այս անտակ անխիղճ գործերուն:

Թող մասնախումբ մը կազմեն հայ ճամբորդներուն հոգ տանելու պէտք եղած դիւրութիւններ ընելու. օթէլ ճաշարան և այլն: Ինչու հարուստը կողպուուի, ինչու և աղքատն ալ անօթութենէն մ'տնի:

Արդեօք չէ կարելի որ հարուստին գիւրութիւնները յայտարարուի և աղ- քատներուն ալ նախական և ամեն պէտք եղած օգնութիւնները բնեն:

Ա՛խ սիրելիս, շատ բաներ կան դրս լիք. բայց ո՞ր մէկը դրէլ...:

Հնչակեան մը

Ֆիլիպի 5 ապրիլ 1902

Կայ ժամանակ մը, որ սեղա Փ. Պօլսի հրատարակի վրայ կը շրջի Սեր- գիս անունը բնիկ Մէլի մը, իր երկ- րորդ անունը է Շեյիօյ: Սա առաջ- նակար խաչագող մ'է. ոչ ոք կարող է նրա ձեռքից սրբել, իր հասակի եր- կայնութենէն և խօսքերի շատու- թիւնէն սմեռ մտքը գրեթէ խարուած է 15 ֆրանք 10.5-3. ամենէն վարը 1 ֆրանք:

Սեր խաչագողը կաշակուեց բառէն երբեք չախորժիր... Իրեն խաչ- յու գործն է ըրած Գուրչունչու-խակը վաճառականի ուր քով մեկ երկու օրին մեկը... Բայց ո՞վ է այդ վա- ճառականը որ ո՛չ ոք գիտէ... Գրե- թէ 15 օրուան մէջ հարկը ֆրանքէ աւելի գումար մը չորթած է:

Սա 3-4 տարի առաջ ալ մի անգամ եկած և ուզած է. այս ներկայ դու- թեամբ ապրիլ, Բայց ինչպէս կըլլայ դժբախտաբար բնեմ առաջին անգամ ըլլալով մեր խաչագողը օյնախորժէ կու- մը կը դիմէ որ, ո՛չ թէ ինք, այլ հեշտակուսը վայրէտ Գուրսը Պարտը նոյն լսկ չէ կարող տնթիմի մը խա- ընի, «Ձարգճի հաճի Յակոբ Տիգրայի»: Սա, մեր խաչագողին յարմար դատ մը տալով կարողութիւն խոտնութեն: Այդ եղծ յանգիմանութիւնը ոչինչ համարելով, ուղղակի կը դիմէ հան- գուցեալ Տէր Արխատակէս քահանային և անկէ իր ուզած տանը հի՛ գ ֆը- րանքով առնելով կ'ոչնչայս անայ: Հան- գուցեալ Տէր Հոյրը ի գ'ուր կը փնտ- րէ...:

Այս օր կրկին հրատարակ է եկած: Սա կերեւի թէ մի չըլնեն խաչագող է: Կը գգո շացուենք մեր Պուլկա- րիւս հայ և Ռուսմանիւս հայ ազգա- յինք: Որպէսզի չի խաբարին այս ա- սակ խաչագողներէ:

Չը մտնամ բռնել որ սա ոչ մի կու- սակցութեան չի պատկանիր: Բայցի միայն քէյֆ...:

ՇԱՆՔ

ԱՐԿԱՐ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Առաջին անգամս ըլլալովէն էր, որ Պուրկայ հանդիպեցայ, ու սեսարա- նի մը ներկայ գտնուեցայ. իզճի մտօք բնեմ, այդ սեսարանը շատ լուս տպաւորութիւն մը թողուց վը- րաւ:

Ամեն տեղի ու ծակ ու ծռակի հեռ ըսած անօթ նշանակող հայնոյն շառ- լաթան, Տիլրիկցի Սամարճի օղու-

Յակոբ Արապեան բուսած արտաբը ամեն ժամանակ խուլ անկեղծները հայ յեղափոխական կուսակցութեանց վրայ անտեղի ու աղտոտ յարձակում ներ կը գործէր. հայրենիքի մէջ կուսակցները դող ու սուղակ յորջո- ճելով և կուսայ գալով մէջի նահու- տակներուն գերագնանները հայնոյց այդ վտար Գանի օր առաջ ալ. իր խանութի մէջ Գ. Ն. Կուսակցական յո- միտէի հանցէի՝ հաղար և մէկ աղ- ասա աւտոր ամականներ կը դր- ծածէ. նոյն վայրկեան իր խանու- թիւն մէջ իր վարձն պիտի ստանայ եղբ. բայց մտ մը ներկաներու մի- ջախուսութեան շնորհիւ հազիւ թէ էր օճիքը կրնայ աղտակը:

Երկար ժամանակէ ի վեր, այդ վա- րի շրջան վայրահաղութիւնները, գէշ տպաւորութիւն թողուցած է եղբ Պուրկայի մէջ ապրող հա. փողովը- ան վրայ: Այդ աղտոտութեանց ու լիտի բերանին չափ ու սահման մը դեռելու համար, որքան որ իր բարե- կամներէն մաս մը աշխատած են, բայց ի գո. է անցած:

Այդ տեսակ ահանջով չը լսող ու չըզգաստացող ճիւղներուն կոնա- կով լսեցնել տալու համար, ամտոյ ծի առաւօտ, ճիշդ ժամ Յի տանները մեծ պողտոյն վրայ, ամեն աղբբու ներկայութեամբ, առաջին անգամ ըլլալով է որ դանակոծուեցաւ փա- սաւորապէս անհասէ մը, ի զգաստու թիւն, որ երկրորդին Ես չը փորձէ իր աղտոտ բերանով հայ ընտանե- կան յարկը ու անձնազոհ նահատակ- ներու գերեզմանը հայնոյնը:

Ահա հայ յեղափոխական կուսակ- ցութեանց ու հայրենիքի համար անձ նազո՞հ հերոսներու յիշատակին լիտի- արար յարձակողներու արդար հա- տուցումը:

Անցորդ մը

3 ապրիլ 1902
Պուրկայ

ԲԱՑ ՆԱՍԱԿ

ԻՐԱՆԻՆԻՔԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ Պ. ԳՈՒՐԿԱՅԻՆ ԵՆ ՀՈՒՐԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

Խմբագիր Տէր!

Հաճեցէք հրատարակել մտակայ թիւեյն միոյն մէջ. իմ և ընկերնե- րու աղբարացի իրուցներէն պաշտ- պանելու համար:

Նախ պ. Գուրկայի կը հարցնեմք թէ ո՞վ իրեն ստիպեց ձեռք մը դնել լրագրին մէջ մասնկից զուրս ըսելով. ո՞վ իրաւունք տուաւ հանրագրողներս իրեն դործիք բնու, որուն զէմ պիտի բողբենք առանձին մեր պա- տիւն պաշտպանելու համար:

Բ. բորք նոյն 20րդ թիւ ոյն մէջ բոսած է որ Թաղ. Խորհրդի մէկ ան- գամը «Ց1 անձնաւորութիւններն Ազգ. և Կրթական տուրք չը վճարողներ. այլ պարզապէս խուճուութիւն յարու- ցանող անկարեւոր անհատներ են, հետեւաբար պէտք չէ անոնց կարու- րութիւն սալ» ալ գէն մենք թաղա- կանութեան հետ գործ չունինք, մեր հանրայնութիւնը միայն Հոգաբար- ձուութեան ուղղուած էր. ու եթէ ի- րօք Թաղ. Խորհրդի մէկ անգամը այդպէս խօսք մ'ըսած է, պ. Գուր- պէթեանէն կը պահանջենք որ այդ անձին անունը լրագրին մէջ գրէ, ապա թէ ոչ աւտօթ իրեն...:

Գալով Պատուարժան Հոգաբարձու-

Թևան, եթէ պաշտօնապէս մեր հան-
րագրութեան պատասխան չը տան,
ինչպէս բերանացի խոստացած են,
պիտի ստիպուինք վարժարանաց
ընդհանուր տեսչին զիմն 2-3 հա-
րիւր ստորագրութեամբ և պիտի բո-
ղոքենք իրենց լուծեան դէմ: Ուս-
տի խնդրոյն այսպիսի ծանր կերպա-
րանք չը տալու համար կը խնդրեմք
որ ընդ փոյթ պատասխանեն:

Մնաժք յարգանք
81, տորագրողներէն Մ. Էսկիճեան

Յ. Գ.
Մէկ օրինակ ալ «ՀԱՅԵԼԻ»ի խմ.
բագրութեան զրկած եմ:

Նոյն

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

Ի ՆՊԱՍՏ ՌՈՒՍՃՈՒԿԻ ԵՐԳ.
ԽՄԲԻ ՏՐՈՒՍԾ ՑԵՐԵԿՈՑՈՒՆ

24 յարա 4902

Խմբագիր

Կը խնդրեմք ինչպատ տեղւոյս
Երգ. Խմբի տրուած ցերեկոյթի ներ-
փակ հաշուեցանկին տեղ տալ ձեր ազ-
գօգուտ թերթին մտակայ թիւերէն
մէկուն մէջ, որուն համար կը փու-
թանք կանխաւ յայտնել մեր շնորհա-
կալիքը:

Մերին յարգանք ի զիմաց Երգ.
Խմբի
Դանձապահ Ատենայեան
Արտ. Ասլանեան Մ. Ալթունեան

Մուտք

68 տոմ 1 Փրանքնոց	68.—Փր.
28 « 0.50 »	14.— »
Կամուր նուէրներ	
1 հոգի	9.— »
4 «	4.— »
2 « (Չական Փր.)	4.— »
4 «	1.— »
Գումար	400.— »

ԵԼՔ

Յայտ. և ընկալագրի	15.— »
Տախս	—
Աթոռներու փոխադրո	4.— »
Էթեան	—
Մանր մուշր	1.— »
—	—
—	20.— »
Չուտ հատոյթ	80.— »

Ա. կարգի աթոռներոր գինը 1 Փր.
Բ. կարգի 40 սանդ. էր:

Նոյն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պետրոս Սէրէմճեանի աշխա-
տութեանց հաւաքածոն հրատա-
րակելու համար, Ռուսոնոքցի
երկու տիկիններէ ստացանք հինգ
(5) լէֆ. ուրեմն նախորդ 147
լէֆ 80 սանթիմի հետ հիմա
խմբագրութեան մօտ կը գտնուի
152 լէֆ 80 սանթիմ:

— Զմիւռնիոյ Ազգային հիւան-
դանոցի աղմկայոց յորեւեանին
առթիւ, այդ հաստատութեան զուտ
չահ մնացեր է 350 ոսկի, 250 օ.
խայ պլլուր, և 50 օխայ լուրիա:

Կեցցե՛ն Իզմիրցի հայրը!!!
— Օրման փաշա Հայոց Պատ-
րիարքը կրկին Սուլթանէն չչա-
նչան մը ընկուներ է. Օսմանիէ
սուալին սատրիճանի սկանակո՞ւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ո Ռ Ի Ր Ք Ի Ս

Պուլկար Էկզարիսին մօտիկ շր-
ջանակներու մէջ կը վախցուի որ
էքզարխութեան պաշտօնը բոյո-
րովին շնջուի:

— Մէծ վէպի բի հրամանով Լօ-
րանտօի և թիւ պիւրի պարտքէն
որոշեալ մաս մը վճարուեր է մա-
մանակին:

— Վրէննայի գիւտնագիտական
շրջանակներու մէջ կը խօսուի
որ Բ. Գուռը բոլոր կառավարու-
թեանց յայտարարած է թէ՛
Միս Սթօնը առեւանգող հրոսո-
խումը կը պատրաստուի Մակե-
դոնիոյ մէջ՝ ու է մեծ պետու-
թեան մը հիւպատոսը փախցնել
և կը խնդրէ իրենց հիւպատոս
ներուն ազդարարեն որ զգուշ մը
նան:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Էքզարիսին զրկուած բազմա-
թիւ հեռագիրներէն միայն 25ը
հասեր են անոր ձեռքը, իսկ
միւսները կորուսեր են:

— Ապրիլի 28ին Պուլկարները
կը պատրաստուին Էքզարիսի հո-
գեւոր կոչման մէջ ծանայե-
լուն 25 ամեայ յորեւեանը տօնել:

— Նախարարացեալ Տանէֆ Բէ-
թերպուրկէն Սօֆիոյ վերադար-
ձեր է: Ահագին բազմութիւն մը
բարեկամներու և համակիրներու
մասնաւոր թրէնով գիմարեր
են նախարարացեալը:

— «Վեչերնա Քոլթա» թերթը
կը հաղորդէ որ Տանէֆ շատ գոհ
վերադարձած է—մանաւանդ փո-
խառութեան խնդրոյն մէջ, յաջո-
ղեր է. փոխառութիւնը պիտի
ըլլայ առանց ծխախոտի մօնօքօ-
լի:

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Վլադիմիր մեծ գուլին, կայ-
սեր հօրիզօր՝ աղիկը, իշ-
խանուհիի էլէնա Պուտաբէշտի
թերթերու հարցողածին համե-
մաւ, իր սիրական մէկ ուսանո-
ղի մը հետ հօր անէն փախեր է
գէպի արտասահման պատկուելու
նպատակով: Սակայն Վարչապի-
տի երկաթուղիի կայարանին մէջ
փախտական զոյգը ձերբակալե-
ր են, իշխանուհիի հօր քովը վե-
րագրաձեռքեր են, իսկ ուսանողը
աքսորեր են Սախալին, իշխա-

նուհին նշանուած է եղեր Պ սաե-
նի գուքին հետ:

— Կերքին գործոց նախարար
Արեակիսի սպանութիւնը այնպի-
սի տարափ տարածեր է իր յուր-
ջը գտնուողներուն վրայ. որ ա-
մենքն ալ, առանց զարնոյր բու-
նել մտածելու փախեր են: Սաս-
նոյրը եթէ ուղեր պիտի կրնայե-
ղեր փախչիլ:

Գառախազին յայտարարած է
որ նախարարը սպանած է զուր տե-
ղը Սիւպրիս արտարուած հօրը
վրէժը, նոյնպէս և իր անձնական
վրէժը լուծելու համար: Այդ-
ցուցմունքը տեղի ունեցեր է մա-
համեթ Նախարարին ներկայու-
թեանը՝ որուն ան պատասխանած
է:

«Նս անձեզ եմ. ես միշտ ապէ-
կը կուզէի ընել, և ինչ որ ըրած
եմ, վերէն եկած հրամանի հա-
մաձայն եղած է»:

Իսկ է եղած նախարարին վեր-
ջին խօսքերը:

Չ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ս

Շատ հաւանական կը թուի որ
իտալո—լուիցերական վէճին կար
գաղբումը յանձնուի Լահէի իրա-
ւարար տեսանին:

Չ Ի Ն Ս Ս Ս Ա Ն

Բէքիսի համալսարանի ուսու-
ղինադէտ բրօֆէսօրը և շատ օ-
րիններ պաշտօնէ արձակուեր և
ճարտնացի բրօֆէսօրներ չրաւ իր
ուեր են:

ՊՈՒԼԿԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆԸ

Կառավարութիւնը՝ յեղափո-
խական շարժումները վտանգաւոր
համարելով թէ Մակեդոնիոյ
պուլկարներուն, թէ պուլկար իշ-
խանապետութեան և թէ ամբողջ
ազգային գաւառի համար, շրջա-
բերական մը զրկած է իր թուր-
քիա գտնուած գործակատարնե-
րուն, որուն մէջ շեշտուով այդ
վտանգները կը յայտարարէ և իր
որոշումները—որ կառավարու-
թիւնը իշխանապետութեան մէջ
պիտի արգիլէ ու է շարժում, ո-
րուն նպատակն է խռովութիւն-
ներ յարուցանել գրացի կայս-
րութեան մէջ և գործակատար-
ներուն կառավարիչ խորհուրդ
տալ թուրքիոյ պուլկարներուն
հանդիստ մեալ:

Նոյն շրջաբերականին պատ-
ճէնը պուլկար կառավարութիւնը
զրկած է իր զիւսնագէտներուն
առաջարկելով որ Պերլինի դաշ-
նագրութիւնը ստորագրող պե-
տութիւններուն ուշադրութիւնը
հրաւիրեն այս կէտին վրայ թէ՛

պուլկար կառավարութեան խա-
ղաղութիւնը պահպանելու համար
ձեռ առած միջոցները անհետե-
ւանք պիտի մնան, և խաղաղու-
թիւնը Բալկանեան թերակղզիի
վրայ սպառնուած չը պիտի ըլ-
լայ, մինչեւ որ միջոցներ ձեռք
չառնուին թուրքիոյ կայսրութիւնը
բարեփոխելու:

ՆՕԹՈՒՅՈՒՎ ԵՐԳԵՐ

Ֆիլիպէի Հայկ. Երգեցիկ խում-
բը պատրաստ ունի հետեւեալ
քառաձայն երգերը:

«Մեր Հայրենիք», «Մայր Ա-
րարի» և «Զրիգլիսին Ֆաթէն
կիտամ», «Լոնց ամպերը», (Կա-
րա Մուրգա), «Ի մարտ—բաւ է
որբան», «Վրէժ—թող կորնչին»,
մէկական երես 15 սանթիմ:

«Արիք Հայկապոնք», «Էս լր-
սեցի մի անուշ ձայն», և «Օյնա-
յան»—ժողովրդական պարերգ—
(Կարա Մուրգա) երկու քական ե-
րես 30 սանթիմ:

«Ռազմերգ—Հայ եղբայրները»
3 երես 45 սանթիմ:

«Ինչպէք տեսէք ո՞վ է կերել
ղէժ» և «Լէֆօ լէ լէ»—ժողովր-
դական պարերգ—(Կարա Մուրգա)
«Կախաղան—բերին աթոռ և լաւ»
4ական ձրես 60ական սանթիմ:

Արտասահմանի համար մէկ ե-
րեսը 20 սանթիմ:

Ֆիլիպէի Հայկ. Երգ.—բար. Խուրի

Հասցէ
Յակոբ Սըվաճեան
(Ֆիլիպօր)

ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայրապետ Սարգսեան սիրելիազ-
կա մեծ պօղոտային վրայ.
Ամենաընտիր ապրանքէ պատրաս-
տի եւ մասնաւոր պատէրով կօշիկ-
ներ. զները չափաւոր. Վստահ ենք
թէ յաճախողները գոհ պիտի մնան
ամեն կերպ.
Վառնա

9

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական, մի-
ջազգային իրաւունքի, ընկերական
հարցերու, գրական եւ գեղարուես-
տական:
Տարեկան 15 Փր.
Վեցամսեայ 8 Փր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна